Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, ԳԻՄ Նախագահ
Ն. Խ. Կարիբեկյան
«02» 03 20/4թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ

Սույն կանոնակարգը սահմանում է ԱԲՀ-ի /այսուհետ՝ Համալսարան/ պատվավոր կոչումներ շնորհելու կարգը:

I. Ընդհանուր դրույթներ

1.1 Համալսարանի պատվավոր կոչումներ շնորհվում են ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներին:

1.2 Պատվավոր կոչումներ շնորհելու համար նախատեսված են հետևյալ տարակարգերը՝

- դասախոսներ, որոնք ունեն պրոֆեսորի գիտական կոչում և գիտությունների դոկտորի գիտական աստիճան,
- դասախոսներ, որոնք ունեն պրոֆեսորի գիտական կոչում և գիտությունների թեկնածուի գիտական աստիճան,
- բժիշկներ և այլ բնագավառի մասնագետներ:

1.3 Նշված տարակարգերին համապատասխանում են այն դասախոսները և մասնագետները, որոնք զգալի ավանդ և ներդրում են ունեցել Համալսարանի զարգացման գործում, կամ ունեն միջազգային ճանաչում կրթության, գիտության, բժշկագիտության և գործնական բժշկության բնագավառում:

II. Թեկնածուների առաջադրման կարգը

2.1 Համալսարանի պատվավոր պրոֆեսորի և պատվավոր դոկտորի կոչումները շնորհվում են համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

2.2 Պատվավոր պրոֆեսորի և պատվավոր դոկտորի կոչումների համար թեկնածուներ կարող են առաջադրել համալսարանի ռեկտորը, համալսարանի գիտական խորհուրդը և ամբիոնները:

2.3 Թեկնածության առաջադրման հարցը գիտական խորհրդում ներկայացնում է Համալսարանի գիտական քարտուղարը:

2.4 Պատվավոր պրոֆեսորի և պատվավոր դոկտորի կոչումները շնորհվում են և վկայագրերը հանդիսավոր կերպով հանձնվում են համալսարանի գիտական խորհրդի նիստում: Առանձին դեպքերում վկայագրի հանդիսավոր հանձնումը կարող է տեղի ունենալ այլ երկրում՝ համալսարանի պատվիրակված ներկայացուցչի կողմից:

III. Համալսարանի պատվավոր պրոֆեսորի և պատվավոր դոկտորի իրավունքները

3.1 Համալսարանի պատվավոր պրոֆեսորը և պատվավոր դոկտորն օգտվում են համալսարանի դոկտորի և պրոֆեսորի իրավունքներից՝ ստանալով իրավունք կարդալու դասախոսություններ, իրականացնելու գիտահետազոտական աշխատանքներ, ինչպես նաև մասնակցելու գիտաժողովներին, սեմինարներին և այլ գիտամեթոդական միջոցառումներին:

Համալսարանի պատվավոր պրոֆեսորին և պատվավոր դոկտորին հնարավորություն է տրվում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու համալսարանի գիտական խորհրդի նիստերին:

3.2 Համալսարանի պատվավոր պրոֆեսորի և պատվավոր դոկտորի անունները բոլոր տիտղոսներով, երկրի անվանմամբ, շնորհման ամսաթվով գրանցվում են «ԱԲՀ պատվավոր պրոֆեսորների և պատվավոր դոկտորների» պատվո գրքում, ինչպես նաև նրանց մասին տեղեկատվություն է զետեղվում համալսարանի կայքում: